Հավելված
ՀՀ վարչապետի 2013 թվականի
նոյեմբերի 26-ի N 1087-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անունը, ազգանունը	Սամվել Հարությունյան
Զբաղեցրած պաշտոնը	ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ
Գործուղման վայրը և ժամկետները	ք. Աստանա (Ղազախստանի Հանրապետություն), 2017թ. հունիսի 12-ից 15-ը
Հրավիրող կողմը	Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (ՄԳՏԿ)
Գործուղման նպատակը	Մասնակցություն ՄԳՏԿ կառավարիչների խորհրդի հերթական նիստին, ինչպես նաև EXPO-2017 միջազգային ցուցահանդեսի շրջանակներում կայանալիք «Ապագայի տեխնոլոգիաներ և կենսաբանական անվտանգություն» խորագրով միջոցառմանը
Քննարկված թեմաները	ՄԳՏԿ կառավարիչների խորհրդի հերթական նիստի ընթացքում քննարկվել և լրամշակվել է համատեղ նախագծերի ֆինանսավորման հարցերը կարգավորող թիվ GB63/64 փաստաթղթի աշխատանքային տարբերակը, վերանայվել և հաստատվել են 2016թ. աուդիտի արդյունքները, ինչպես նաև ներկայացվել են 2018թ. բյուջետային առաջնահերթությունները, վերանայվել են ՄԳՏԿ կարճաժամկետ միջոցառումներին, թեմատիկ նախաձեռնություններին, ինչպես նաև անդամ-պետությունների ընդլայնմանն առնչվող ծրագրերը: Նիստի ընթացքում անդրադարձ է կատարվել նաև Աստանայում կայացած «EXPO-2017. Ապագայի տեխնոլոգիաներ» միջազգային ցուցահանդեսի հիմնական նպատակներին և խնդիրներին: Նիստի ընթացքում քննարվել է նաև ՄԳՏԿ 25-ամյակի կապակցությամբ երիտասարդ

	գիտնականների շարժունությունը խթանող մրցանակ սահմանելու անհրաժեշտության հարցը: Բացի այդ, EXPO-2017 միջազգային ցուցահանդեսի շրջանակներում ՄԳՏԿ կողմից կազմակերպվել է «Ապագայի տեխնոլոգիաներ և կենսաբանական անվտանգություն» խորագրով միջոցառումը, որի ընթացքում հնչել են անվանի փորձագետների ելույթներ, կայացել են տարբեր երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ ցուցադրություններ, ինչպես նաև կազմակերպվել է «Էներգետիկա, տնտեսություն, քաղաքականություն. նոր հայեցակարգ» խորագրով կլոր-սեղան քննարկումը:
Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը	Հանդիպման ընթացքում ՄԳՏԿ անդամ պետությունների բարձրաստիճան ներկայացուցիչները, որոնց թվում՝ Ս. Հարությունյանը, հանդես են եկել մի շարք ելույթներով և ամփոփիչ զեկույցներով, որոնց շրջանակներում անդրադարձել են իրենց պետություններում «ՄԳՏԿ գործունեությունը շարունակելու մասին» համաձայնագրի վավերացման և ուժի մեջ մտնելու գործընթացին, ինչպես նաև տարածաշրջանային բաժանմունքների արդի կագավիճակին և դրանց առջև դրված հիմնական խնդիրներին: Ս. Հարությունյանի կողմից նշվել է, որ «ՄԳՏԿ գործունեությունը շարունակելու մասին» համաձայնագիրը գտնվում է ներպետական վավերացման վերջնական փուլում: Բացի այդ, EXPO-2017 միջազգային ցուցահանդեսի շրջանակներում կազմակերպված «Էներգետիկա, տնտեսություն, քաղաքականություն. նոր հայեցակարգ» խորագրով կլոր-սեղան քննարկման ընթացքում հնչել են Ղազախստանի, ԱՄՆ-ի, ԵՄ-ի, Մեծ Բրիտանիայի, Մերձավոր Արևելքի, Հնդկաստանի, Ուկրաինայի, Ճապոնիայի և այլ պետությունների անվանի փորձագետների զեկույցները, որոնց շրջանակներում ներկայացվել է ապագայի էներգետիկ տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ ռազմավարության մշակման և ներդրման բնագավառում նշված պետությունների հաջողության փորձը, ինչպես նաև քննարկվել են նշված ոլորտում միջազգային

	համագործակցության հաստատմանն առնչվող հարցերը:
Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:	Հանդիպման արդյունքում լրամշակվել և ստորագրվել է համատեղ նախագծերի ֆինանսավորման հարցերը կարգավորող թիվ GB63/64 փաստաթղթի աշխատանքային տարբերակը: Բացի այդ, սահմանվել է ՄԳՏԿ 2018թ. միջոցառումների ժամանակացույցը, և հաջորդ տարվա համար համակարգող երկիր է նշանակվել Հայաստանի Հանրապետությունը:
Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները	Քննարկումների ընթացքում կողմերը պատրաստակամություն են հայտնել շարունակել գործունեությունը ՄԳՏԿ շրջանակներում համագործակցության ընդլայնման ուղղությամբ:
Գործուղվող	Սամվել Հարությունյան
Ստորագրություն, ամսաթիվ	19.06.2017թ.